## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1/3-01/2113

„26" 05 2011թ.

ՀՀ, ք. Գյումրի, Վարդանանց հր. 1,
Հեռ. (+374 312), 3-46-05;
Հեռապատճեն (+374 312) 4-87-01;
Կայքը www.Gyumricity.am
Էլ.փոստ- gyumri@gyumri.am

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ**
**ՊՐՆ Ա.ԳԻԶԻՐՅԱՆԻՆ**

*Հարգելի մարզպետ*

Ուղարկվում է Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի մարտի 29-ին կայացած N 5 նիստի NN 49 – 56 որոշումները:

Առդիր՝ 9 (ինը) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ

Մուտք N 3295-11
26. 05. 2011թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«29» մարտի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 5

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 49-Ա

## ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքի գլխավոր հատակագիծը և գոտիավորման նախագծերը, քաղաքաշինության բաժնի կողմից ներկայացված հողամասերի օգտագործման սխեմաները ու ելակետային տվյալները, ինչպես նաև՝ Գյումրու քաղաքապետի 23.03.2011թ. N 1026-Ա որոշմամբ սահմանված հողամասերի մեկնարկային գները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով և Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետով՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Հաստատել Գյումրու քաղաքապետի 23.03.2011թ. N 1026-Ա որոշմամբ աճուրդով օտարելու համար առանձնացված հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն ստորև ներկայացված Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 21.03.2011թ. N8 արձանագրության ցուցակի:

Աճուրդով օտարման համար առանձնացված հողամասեր՝

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ տարածագնահատման գոտին | Ծածկագիրը Մակերեսը՝ քառ,մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գարեգին Ա փող. 1 նրբ. 9/2<br>11-րդ գոտի | Ա՜11-0050<br>389.18 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 460 000 |
| 2 | Մարմաշենի խճ. 11/14<br>11-րդ գոտի | Ա՜11-0053<br>300.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 620 000 |
| 3 | Վ.Սարգսյան փող. 3/5<br>9-րդ գոտի | Ա՜11-0012<br>72.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | հասարակական նշանակության օբյեկտ կառուցու և որպես բակ օգտագործելու համար | 240 000 |
| 4 | Վ.Խաչատրյան փող. 2/5<br>9-րդ գոտի | Ա՜11-0051<br>20.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | բնակելի տան հարևանությամբ օժանդակ շինություն կառուցելու համար | 70 000 |
| 5 | «Մուշ-2» թաղ. 2/18<br>11-րդ գոտի | Ա՜11-0052<br>60.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | սպասարկման օբյեկտի կառուցում | 150 000 |
| 6 | Անտառավան 5 թաղ. 80/3<br>10-րդ գոտի | Ա՜11-0042<br>50.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 150 000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Գերցենի փող. 1/27<br>10-րդ գոտի | Ա<11-0054<br>170.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 360 000 |
| 8 | «Մուշ-2» թաղ. 4/47<br>11-րդ գոտի | Ա<11-0055<br>1539.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 4 300 000 |
| 9 | «Մուշ-2» թաղ. 4/49<br>11-րդ գոտի | Ա<11-0056<br>825.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 2 500 000 |
| 10 | «Մուշ-2» թաղ. 4/48<br>11-րդ գոտի | Ա<11-0057<br>740.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 2 200 000 |
| 11 | «Մուշ-2» թաղ. 4/50<br>11-րդ գոտի | Ա<11-0058<br>740.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 2 200 000 |
| 12 | Կ.Դեմիրճյան փող. 8/6<br>10-րդ գոտի | Ա<11-0059<br>50.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 230 000 |
| 13 | Մազմանյան փող. 18/6<br>8-րդ գոտի | Ա<11-0060<br>220.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 100 000 |

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ՋԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

**29 մարտի 2011թ.**
**ք.Գյումրի**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«29» մարտի 2011թ. Արձանագրություն N 5
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 50-Ա

### ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑԻ N 91 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում» ընդգրկված Ջիվանու փողոցի N 91 հասցեի 818.94քմ մակերեսով շենքը (սեփականության վկայական 1140051) 1988թ. երկրաշարժից վնասվել է և հետերկրաշարժյան ամբողջ ժամանակահատվածում մնալով անօգտագործելի, մթնոլորտային և բնակլիմայական և այլ գործոնների պատճառով քայքայվել է կտուրը, կրող պատերի որոշ տարրեր, փայտյա ծածկերը, շարքից դուրս են եկել դռները, պատուհանները և ներքին հարդարումը:

«ՍՊՀսՃ» ՊՈԱԿ-ի կողմից 25 մարտի 2011թ. տրված տեխնիկական վիճակի ուսումնասիրման եզրակացությամբ շենքի վնասվածությունը գնահատված է III աստիճանի և առանց վերականգնման-ուժեղացման շենքի հետագա շահագործումը հնարավոր չէ:

Հանրապետության առկա սոցիալ-տնտեսական իրավիճակը նախապայմաններ չի խոստանում մոտակա տարիներին վերականգնման-ուժեղացման համար պետության կողմից ֆինանսական միջոցների տրամադրելուն:

Այս պարագայում նշված շինությունը վերականգնելու իրատեսական տարբերակը մասնավոր ներդրումների ներգրավումն է:

Նկատի ունենալով վերոհիշյալը և հաշվի առնելով ճարտարապետական արժեք ներկայացնող Ջիվանու փողոցի N 91 հասցեի շենքի վերականգնման անհրաժեշտությունը քաղաքի կենտրոնի վերականգնման գործընթացում, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականությունը հանդիսացող Ջիվանու փողոցի N 91 հասցեի 818.94քմ մակերեսով շենքն իր զբաղեցրած 689.16քմ հողամասով օտարել անուրդային եղանակով:
2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից 28 մարտի 2011թ. N 63 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 818.94քմ մակերեսով շինության համար օտարման մեկնարկային գին սահմանել 14 000 000 /տասնչորս միլիոն/ դրամ, իսկ 689.16քմ հողամասի համար 7 000 000 /յոթ միլիոն/ դրամ:

3. Շինության, որպես ճարտարապետական արժեք ներկայացնող տեղական նշանակության հուշարձանի, պահպանմանը և վերականգնման-ուժեղացմանը ներկայացվող պահանջները օրենքով սահմանված կարգով մանրամասնել առուվաճառքի պայմանագրում և աճուրդի պայմաններում:
4. Շինության առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ՋԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

[illegible]ՅԱՆ

**29 մարտի 2011թ.**
**ք.Գյումրի**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«29» մարտի 2011թ. — Արձանագրություն N 5
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 51-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքը ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188 հոդվածի և ՀՀ Կառավարության 18.05.06թ. թիվ 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն ՀՀ Կառավարության 18.05.06թ. թիվ 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1) ՀՀ Կառավարության 18.05.06թ. թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, թույլատրել օտարել ներքոհիշյալ հասցեներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները՝

| | | | |
|---|---|---|---|
| 1. | Լալայան փող. N 90/3 | - | Վարդանուշ Շիրինյան |
| 2. | Կոմինտերնի փող. 2-րդ շարք N9/2 | - | Սվետլանա Գրիգորյան |
| 3. | Կ. Դեմիրճյան փող. 1 նրբ N 8/2 | - | Նունե Սահրադյան |
| 4. | Մուսայելյան փող. N 95/5 | - | Արմեն Մխիթարյան |
| 5. | Հաղթանակի փող. N 3 / 4 | - | Սեյրան Գևորգյան |
| 6. | Գերցենի փող. N 1/23 | - | Ժաննա Մուրադյան |

2) Շինության և հողամասի օտարման գները սահմանել համաձայն ՀՀ Կառավարության 18.05.06թ. 912-Ն որոշմամբ սահմանված գների:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ջ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.Մ[illegible]ՔԵԼՅԱՆ

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 5

« 29 » մարտի 2011թ.
ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N 52-Ա

### «ՇԻՐԱԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԿ-ԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել «Շիրակ միջազգային միություն» Հասարակական Կազմակերպության ղեկավար Մ.Հ.Մուրադյանը դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով՝ կազմակերպությունը չունի հնարավորություն կուտակված պարտքերը մարելու համար:

Ելնելով հարցի անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

«Շիրակ միջազգային միություն» Հասարակական Կազմակերպությանը Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից անկանխիկ հատկացնել 2280000 /երկու միլիոն երկու հարյուր ութսուն հազար/ դրամ օգնություն: Գումարը փոխանցել Հ/Հ-ին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

[illegible]

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 5

« 29 » մարտի 2011թ.
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 53-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ «ՓՅՈՒՆԻԿ» ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Հայաստանի Հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրիի մասնաճյուղի ծրագրերի ղեկավար Ա.Նիկողոսյանը 15 աշխատակիցներին դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով՝ յուրաքանչյուրին ամեն ամիս 10000 դրամի չափով:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրիի մասնաճյուղին քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից յուրաքանչյուր ամիս հատկացնել 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ /անկանխիկ/ դրամական օգնություն:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ — ՁԵՌՆՊԱՀ՝
ԴԵՄ
ՉԿԱ — ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«__29__» __մարտի__ 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N __5__

# ՈՐՈՇՈՒՄ N __54-Ա__

### ԳՅՈՒՄՐՈՒ «ՀԱՅԱՍՏԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ» ՀԿ-Ի ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՈՒՆԵՑԱԾ ՊԱՐՏՔԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Գյումրու «Հայաստան մարզական միության» ՀԿ-ի նախագահ Ս.Ջանոյանը՝ ՀԿ-ի ունեցած գույքահարկի պարտքի զիջման խնդրանքով՝ գտնվում են ֆինանսական ոչ բարենպաստ պայմաններում:

Հաշվի առնելով հարցի անհրաժեշտությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 1998թվականի մայիսի 19-ի N 300-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Զիջել Գյումրու «Հայաստան մարզական միության» ՀԿ-ի գույքահարկի գծով ունեցած 1725500 /մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար հինգ հարյուր /դրամ պարտքը:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԴԵՄ
ՉԿԱ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ ԿՈՂՄ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ջ.ՁԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի

Հավելված՝
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ-----մարտի---29-----------ի
N--2--նիստի N--55-Ն---որոշման

# ՑՈՒՑԱԿ

| N | Անուն, Ազգանուն | Հասցե | Գումար /դրամ/ | Սոց. քարտ | Ստորագրություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Աթոյան Կատյա | Սևյան 18շ բ30 | 20000 | | |
| 2 | Մարտիրոսյան Սիլվա | Տիմիրյազևի 22 | 25000 | | |
| 3 | Պետրոսյան Ալինա | Գերցենի 6 նրբ տ12 | 30000 | | |
| 4 | Հայլամազյան Լուսյա | Ցոլուկիձե 3նրբ տ1 | 30000 | | |
| 5 | Վարդանյան Քրիստինա | | 30000 | | |
| 6 | Շախբազյան Վաչագան | Ղուկասյան16շ տ9 | 30000 | | |
| 7 | Զատիկյան Սևակ | 237/136 | 30000 | | |
| 8 | Հակոբյան Սուսաննա | Ա.Խաչատրյան 14ա շ բ10 | 30000 | | |
| 9 | Հակոբյան Ռուզաննա | Ռեպինի 217/191 | 40000 | | |
| 10 | Ծատուրյան Սեդա | Մուշ-2 | 40000 | | |
| 11 | Հարոյան Լյովա | Շիրակացի 214/072 | 40000 | | |
| 12 | Հովհաննիսյան Մուրադ | Շինարարների 32 | 50000 | | |
| 13 | Հովհաննիսյան Մուշեղ | Վ.Սարգսյան 229/017 | 70000 | | |
| 14 | Բարակյան Արամ | | 150000 | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | **615000** | | |

**Ֆին.բաժնի պետ՝** **Մ.Գրիգորյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 5

«29» մարտի 2011թ.
ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N 55-Ա

### ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 14 ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 14 քաղաքացիներ դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Թվով 14 քաղաքացիներին /համաձայն հավելվածի/ Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել 615000 / վեց հարյուր տասնհինգ հազար/ դրամ օգնություն:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«29» մարտի 2011թ. Արձանագրություն N 5
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 56 - Ա

### ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասերով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ փոփոխությունները՝
1) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի ենթ. «Մայր Հայաստան» հուշահամալիրի տարածքի պահակի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 45000-ական /քառասունհինգ հազար/ դրամ:
2) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պոմպավարի /«Մայր Հայաստան» հուշահամալիրի շատրվանի, Վարդանանց հրապարակի շատրվանի և Ա.Սավոյանի անվան պուրակի շատրվանի/ աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
3) Քաղաքապետարանի տնտեսական մասի թվով ութ հավաքարարների աշխատավարձերի դրույքաչափերը սահմանել ամսական 55000-ական /հիսունհինգ հազար/ դրամ:
4) Քաղաքապետի տեղակալի գործավարի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
2. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ լրացումները՝
1) Աշխատակազմի անօրինական շինությունների և հողազավթումների վերահսկման բաժնում ավելացնել գործակալի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
2) Աշխատակազմի ճարտարապետական բաժնում ավելացնել գործակալի մեկ հաստիք՝ դրույքաչափը 70000 /յոթանասուն հազար/ դրամ:
3) Աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնում ավելացնել վարձավճար գանձող գործակալի երկու հաստիք՝ դրույքաչափերը 70000-ական /յոթանասուն հազար/ դրամ:
4) Աշխատակազմի ֆինանսական բաժնում ավելացնել համակարգչի օպերատորի մեկ հաստիք՝ դրույքաչափը 50000 /հիսուն հազար/ դրամ:

5) Աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնում ավելացնել գործավարի մեկ հաստիք՝ դրույքաչափը 50000 /հիսուն հազար/ դրամ:
3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշման 1-ին կետով հաստատված հաստիքացուցակում սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ կետերին համապատասխանող հաստիքների դրույքաչափերը:
4. Հանձնարարել ֆինանսական բաժնին /պետ Մ.Գրիգորյան/՝ բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածներում կատարել փոփոխություններ և այդ մասին տեղյակ պահել Գյումրու տեղական գանձապետական բաժանմունքին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ ԴԵՄ ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Գ.ԱԴԱՄՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ՁԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Գ.ԱՌԱՔԵԼՅԱՆ

[illegible]

29 մարտի 2011թ.
ք.Գյումրի